մարդկային ցեղի վերանորոգությունը կգնե նույն Հայաստանի մեջ, քանի որ նա տապանը կհանգչեցնե Արարատ լեռան վրա»9։ Անկախ այս մտքից, որը Խորենացու մոտ էլ առասպելական աղբյուրներից է քաղված, Լայբնիցը հավատում է այն ճշմարտությանը, որ Հայաստանը մարդկության հնագույն ոստանն ու մեծ քաղաքակրթության բնօրրանն է, իսկ հայերենը՝ աշխարհի ինքնատիպ ու հարուստ լեզուներից մեկը։

Հարկ ենք համարում նշել, որ հայ ժողովրդի պատմության, մշակույթի, լեզվի վերաբերյալ Գոտֆրիդ Լայբնիցի ունեցած դատողություններից շատերը, ինչպես գրում է «Բազմավեպը», թեև «զուտ ավանդական են, երբեմն էլ նույնիսկ սխալ, սակայն չեն դադրիր մեզի համար հետաքրքրական ըլլալե այն գնահատական ձևին մեջ, որ կգտնվին այդ մեծ մարդուն բերնին մեջ»10։

Վ. Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

9 Տե՛ս Լայբնիցի՝ Լա Կրոզին գրած 35-րդ նամակը։

10 «Բազմավեպ», 1940, № 4—7, էջ 133։

ԱՐԳԻՇԹԻԽԻՆԻԼԻԻ ՍԱՐԿՈՖԱԳԸ

Արգիշթիխինիլիի հոգևոր ու աշխարհիկ բնույթի տարատեսակ հուշարձանների շարքում կարևոր տեղ են գրավում քաղաքաբնակների թաղման ձևերը, ծեսերն ու ետմահու կյանքի մասին եղած պատկերացումները բացահայտող դամբարանները։ Վերջիններս գտնվել են Դավթի բլրաշարքը հյուսիսից, արևմուտքից և հարավից շրջապատող տարածքում, որն այժմ զբաղեցված է ուշ ուրարտական առանձնատների փլատակներով, Նոր Արմավիր և Նալբանդյան գյուղերի շինություններով ու այգեստաններով։ Մինչ այժմ Արգիշթիխինիլիում հայտնաբերված գերեզմանները շիրիմաթումբ կամ ստորերկրյա մեմորիալ հուշարձանի գոյությունը ցույց տվող որևէ այլ առանձնահատկություն չունեն. այդ իսկ պատճառով դամբարանների մեծ մասը հայտնաբերվել է շինարարական աշխատանքների ժամանակ, հետևաբար և դրանց ուսումնասիրությունը կատարվել է կիսաքանդ կամ լրիվ ավերված գերեզմանների մնացորդների հետազոտության ու տեղի բնակչությունից հավաքված հնագիտական տվյալների հիման վրա։ Թաղումներն Արգիշթիխինիլիում կատարվել են սալարկղներում, քարարկղներում, աղյուսաշեն գերեզմաններում։ Հայտնի են և կարասային թաղումներ, ինչպես և թաղումներ, երբ դիակիզված կամ դիամասնատված անձնի մնացորդը լցվել է կճուճի մեջ և նոր միայն թաղվել։

Ուրարտական թաղման ծեսի ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1973 թ. Արգիշթիխինիլիի արևելյան ամրոցից 350—400 մ հյուսիս, Նոր Արմավիր գյուղի բնակիչ Լևոն Սարդայանի տնամերձ հողամասում գտնված քարե սարկոֆագը[1]։ Այն տեղակայված էր 0,5 մ հաստություն ունեցող մշակովի հողաշերտից 0,4 մ ցած, ավազախառն խճաքարի բնահողային շերտում։ Սարկոֆագն ուներ 45° դեպի արևելք շեղումով, հյուսիս-հարավ դիրքորոշում։ Այն փակված էր ստորին մակերեսները կոպիտ հարթեցված երեք սալաքարերով (ծածկասալերի չափսերն են՝ 1,1×0,48×0,1 մ, 1,05×0,52×0,12 մ, 1,16×0,48×0,9 մ)։ Անխախտ մնացած երկու սալաքարերի արանքը խցանված էր մանր խճաքարով ու կավով։ Երրորդ ծածկասալը հայտնաբերողները կոտրել էին, սարկոֆագի միջից հանելով դաջազարդ երեք թասեր և մեկ աճյունասափոր։

Միակտոր, սև գույնի տեղական տուֆի ժայռակտորից պատրաստված, կլորացող անկյուններով տաշտանման սարկոֆագն ունի 1,52 մ երկարություն և միջին հաշվով մոտ 0,9 մ լայնություն (մի ծայրում լայնությունը 1 մ է, մյուսում՝ 0,75 մ)։ Պատերի բարձրությունները ևս անհավասար են. ընդլայնական պատերից մեկի բարձրությունը 0,65 մ է, իսկ դիմացինինը՝ 0,55 մ։ Ցածր պատի ստորին մասում, հատակի մակարդակին հավասար, կա 3—4 սմ տրամագծով միջանցիկ մի անցք։ Ուշագրավ է, որ Հայաստանի տարածքում հայտնի են դամբարաններ, որոնց պատերին, տարբեր բարձրությունների վրա առկա են միջանցիկ անցքեր. փոքրիկ մի անցք է բացված Շիրակավանի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող 10-րդ դամբարանի հյուսիսային պատը կազմող խոշոր ժայռաբեկորի ստորին մասում. նույն ձևի անցքեր են փորված նաև 1978 թ. Արգիշթիխինիլիում պեղված սալարկղի երկու պատերին։ Բացի այս, Վաղարշապատի կիլիների տների մոտ կարելի է տեսնել ուրարտական սարկոֆագներ, որոնցում այժմ սովորաբար ճոմում են խաղողը։

1 Սա Արգիշթիխինիլիում գտնված միակ սարկոֆագը չէ, քանի որ Նոր Արմավիրի բնա-

դամբարանադաշտում հայտնաբերված, այժմ էջմիածնի երկրագիտական թանգարանում պահվող III—IV դդ. թվագրվող կավե դագաղի նեղացող ծայրում, հատակի և պատի միացման անկյունում ևս առկա է նման մի անցք (ԷԵԹ, զետեղարան, № 3434)։ Կարելի է ենթադրել, որ այդ անցքերը կապ ունեն հոգու մասին եղած ժողովրդական հավատալիքների հետ. այս ենթադրությունն իհարկե դեռևս լրացուցիչ փաստարկման կարիք ունի։

Սարկոֆագի հատակին արված են 0,2—0,22 մ տրամաչափի ոչ խորը փորվածքներ, որոնք ծառայել են աճյունասափորներն ուղղահայաց դիրքով և ամուր պահելու նպատակին։ Սարկոֆագը հողով լցված չէր։ 0,1—0,12 մ հաստությամբ պատերը ներսից ու դրսից սրբատաշ չեն ու նրանց, ինչպես և ծածկասալերի վրա ակնառու են քարտաշի կացնի թողած ոչ խորը հետքերը։ Սարկոֆագի շրջակայքի և տակի հողի միջից հնագիտական որևէ իր չգտնվեց։

Սարկոֆագի մեջ, իրարից ոչ համաչափ հեռավորության վրա գտնվեցին մարդու մասնատված ոսկորներ և զարդարանքի առարկաներ պարունակող չորս շքեղ սափորներ և չորս թասեր։ Առաջին աճյունասափորը դրված էր հյուսիս-արևելյան անկյունում. նրա բերանը փակված էր կիսագնդաձև իրան և ներճկված շրջանաձև նստուկ ունեցող մի կարմիր թասով (աղ. 2_1)։ Ուրարտական այլ հնավայրերում հայտնաբերված աճյունասափորները ևս, որպես կանոն, փակված են եղել թասերով, կավանոթների բեկորներով կամ այլ իրերով[2]։ Որպես աճյունասափոր օգտագործված այս կճուճն ունի ձգված, ուռուցիկ իրան, փոքրիկ, հարթ հատակ, դուրս ճկված շուրթ, ոչ լայն բերան։ Իրանի ուսին կան երեք փոքր անցքեր (աղ. 1_1)։ Այս սափորում մարդու մանրացված ոսկորներից բացի ուրիշ ոչինչ չգտնվեց։ Աճյունասափորի կաթնագեղնավուն և գորշ գունային երանգներով պատված արտաքին երեսը հղկված է քարե կոկիչով, որի տարբեր ուղղություններով տարված հետագծերը լրիվ չեն ծածկում կավի հիմնագույնը։ Հաճելի տեսքով այս գույնի խեցանոթները Վանի թագավորության բրուտության ոչ մասսայական, սակայն հետաքրքիր արտադրանքներից են։ Նմանօրինակ անոթներն Արգիշթիխինիլիում և այլ հուշարձաններում հանդիպում են շողուն-անգոբապատ շքեղ խեցեղենի հետ համատեղ և ունեն հորինվածքային միևնույն ձևերն ու մակերեսների մշակման նույն կատարելությունը։ Այս կավանոթների թվում պատահում են նաև թույլ փայլեցված կամ անփայլ մակերեսներով նմուշներ։ Սույն երևույթն առանձնապես ակնառու է Արգիշթիխինիլիի արևմտյան ամրոցի հարավային կողմում բացված առաջին և երկրորդ նկուղային սենյակներից և պալատական շենքի 15-րդ սենյակի երկրորդ հատակի տակից հայտնաբերված խեցանոթների հարուստ հավաքածուներում, որոնք, ըստ իրենց շերտագրության և կավանոթների հատկանիշների, թվագրվում են մ. թ. ա. VIII դարով։

Մյուս աճյունասափորը դրված էր սարկոֆագի հարավային պատի մոտ։ Սափորի միջից մարդու մանրացված ոսկորների հետ գտնվեցին իրարից հեռացած սուր ծայրերով, հաստացող կենտրոնական մասով բրոնզե փոքրիկ ականջօղեր, գնդաձև, ձվաձև ու անվակաձև քարե ու շաղախե ուլունքներ (աղ. 1_9, աղ. 2_7)։ Ինչպես երևում է, աճյունը սափորի մեջ են տեղավորել իր զարդերով հանդերձ (այդպես էին վարվում և դիակիզման ժամանակ)։ Նկարագրվող աճյունասափորն ունի ուռուցիկ իրան, հարթ հատակ, լայն, քիչ դուրս ճկված կլորացող շուրթի պսակ։ Կավամանի բերանը ձևավորված է այնպես, որ լավ փակվի կափարիչով։ Մուգ դարչնագույն և կարմիր երանգներով, փայլեցված արտաքին երեսով այս անոթի ուսամասում նախորդի նման կան երեք միջանցիկ անցքեր։ Սափորը դաշակիր է. ուսի վրա արված է ճառագայթաձև ութ թմբիկներով լցված սկավառակ (տրամագիծը՝ 1,5 սմ)։ Ներլցումով այսպիսի դաշվածքը առայժմ հայտնի է միայն Արգիշթիխինիլիից։ Ճիշտ նման պատկերակիր դրոշմիչով է դաշված Նոր Արմավիր գյուղի տարածքից պատահարար գտնված կարմիր փայլեցված, ուսամասում միջանցիկ անցքերով կճուճը։ Նրա հարթ կտրված շուրթի պսակով բերանի բացվածքը ներսի կողմից փոքրացված է լրացուցիչ հարթակով, որի վրա նստել է կափարիչը։ Ճառագայթներով ներլցուն սկավառակաձև կամ քառանկյունաձև շրջանակները Վանի թագավորության մոնումենտալ և կիրառական դեկորատիվ արվեստի առանձնապես հարգի մանրամասներից են։ Հետաքրքիր է և որպես աճյունասափոր օգտագործված կավանոթի շուրթի հորինվածքը, որը հանդիպում է համաժամանակյա թե՛ սև և թե՛ կարմիր փայլեցված խեցանոթների վրա։ Ուղղահայաց, կտրվածքում անկյունապատկեր հորինվածք ունեցող շուրթերով, կարմիր փայլեցված մակերեսով խեցանոթների նմանակները ևս հաճախ են հանդիպում Արգիշթիխինիլիում։ Համադրվող իրերից մեկը՝ լայ-

---

[2] Б. А. Куфтин. Урартский колумбарий на подошве Арарата и куро-араксский энеолит.—Вестник Гос. музея Грузии, Вып. XIII—B, 1944, с. 1—16
Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան. Նոր Արեշի ուրարտական կոլումբարին.— ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 10, էջ 63—64։



Նկ. 1

նաբերան, գնդաձև իրանով, կարմիր փայլեցված մակերեսով, հարթ հատակով կավանոթ է, որը հայտնաբերվել է 1973 թ., արևմտյան ամրոցից հարավ, բլուրի լանջի նկուղային 1-ին սենյակից, «ծիսական սպասքի» ուղեկցությամբ, իսկ մեկ ուրիշն էլ՝ 1983 թ., հյուսիսային լանջի 3-րդ դարավանդի վրա պեղված 2-րդ սենյակում։ Այսպիսով, երկրորդ աճյունասափորը իր շուրթի հորինվածքով և դաշվածքի պատկերով համադրվում է մ. թ. ա. VIII դարի վաղեմություն ունեցող նյութերի հետ, հետևաբար և թվագրվում է նույն դարով։

Սարկոֆագի մեջ եղած մյուս երկու աճյունասափորները դրված էին արևմտյան պատի մոտ։ Սրանք միանման, գրեթե միևնույն չափի, մուգ կարմիր, շողուն անգոբապատ մակերեսով, բարձր վզով, դուրս ճկված կլորացող շուրթի պսակով, ուռուցիկ իրանով, շրջանաձև, քիչ բարձր թմբիկով երիզված հարթ հատակ ունեցող գեղատես կճուճներ են, որոնց ուսերին ուկա է մեկական ելունդավոր գոտի։ Սրանց ուսերին ևս արված են երեք միշանցիկ անցքեր։ Արգիշթիխինիլիից, Իգդիրից, Նոր Արեշից, Օշականից և այլ հնավայրերից հայտնի, որպես աճյունասափոր օգտագործված կավանոթները դիտարկելիս, աչքի է զարնում երկու բնորոշ հանգամանք՝ անոթների շքեղությունը և այդ անոթների ուսերին միշանցիկ անցքերի առկայությունը։ Ինչպես ճիշտ նկատել է Բ. Ա. Կուֆտինը, անցքերը փորվել են ոչ թե կավամանների պատրաստման ժամանակ, թաց կավի վրա, այլ հետո, խեցանոթը որպես աճյունասափոր օգտագործելիս և պայմանավորված են այն հավատալիքներով, որոնց համաձայն հոգին վերջնականապես չի լքում հանգուցյալին նույնիսկ մարմնի մոխրանալուց հետո և կարիք ունի տեղաշարժման[3]։ Այս առումով ուշագրավ է, որ ուրարտական դիցակարգում հիշատակվում է մի «աստված, որը հոգիներ է տեղափոխում»[4]։

Չորրորդ աճյունասափորի ուսին կա կլորացող անկյուններով, քառանկյունաձև հրապարակով դրոշմ. նրա վրա պատկերված է երկթեք տանիքով «ամպհովանի», որի անկյունաձև ճակտոնի կենտրոնում, տանիքի մակերեսից վեր է բարձրանում կիսաշրջանաձև ելունը կամ անտը։ Ճակտոնի զարդագոտին կամ «ամպհովանու» տանիքից կախված ծայրերը ձևավորված են ներճկված ռելիեֆ, փոքր եռանկյունիներով։ «Ամպհովանու» տակ ռելիեֆ գծերով պատկերված է հարթ պատվանդանի վրա կանգնած ոճավորված մի թռչուն (?)՝ անկյունաձև բացած թևերով և իրար միացած ոտքերով։ Այս աճյունասափորում գտնվեցին միայն մարդու մասնատված ոսկորներ։ Երրորդ սափորում, մարդու ոսկորներից բացի գտնվեցին երկաթից, բրոնզից, կիսաթանկարժեք քարերից պատրաստված տարբեր իրեր ու զարդեր։ Այս փոքրիկ հավաքածուն բաղկացած է առյուծագլուխ բրոնզե ապարանջանից, երկու շիգղերից, երեք հասարակ, սուր ծայրերով օղերից, երկու երկաթե ասեղներից, կշռաքարաձև կնիքից և բրոնզե բարակ թիթեղների մանր բեկորներից, որոնցից մեկը կարծես ինչ-որ կենդանու՝ կարիճի կամ կոկորդիլոսի իրանի մաս է ներկայացնում։ Վանի թագավորության սահմաններում, ինչպես և Հին Արևելքում լայն տարածում գտած «առյուծագլուխ ապարանջանների» խմբին պատկանող ներկայացվող օրինակը (աղ. 1_7) կտրվածքում շրջանաձև, համահավասար հաստություն ունեցող (0,5 սմ) մի լար է, որի ծայրերն ավարտվում են զանգվածեղ, ոճավորված կենդանու գլուխների քանդակներով։ Գլխի վրա՝ փոքր թմբիկների, հարթ և կլոր հրապարակների ճշգրիտ տեղակայմամբ արտահայտված են երեք կողմերից դիտվող քանդակի դեմքի մանրամասները։ Այս իրը բոլոր հատկանիշներով համընկնում է Իգդիրի դամբարանում գտնված ապարանջանների հետ[5]։ Աճյունասափորում գտնված շիգղերից մեկն ամրողջական է, բացակայում է միայն հորիզոնական դիրքում ամրացվող ասեղը։ Շիգղի լայնացող, ասեղնակալ ծայրերը կեռված են դեպի վեր։ Կենտրոնական մասում հաստացող, կտրվածքում շրջանաձև աղեղի երկու թևերը գոտևորվում են զույգ օղակներով։ Մյուս շիգղը թերի է (աղ. 1_6)։ Նրա աղեղի կենտրոնական հատվածը, ի տարբերություն նախորդի, լայն է, իսկ վերին մակերեսը՝ ծալքավորված։ Բրոնզե տարբեր տեսակի շիգղերը ևս հաճախ են հանդիպում ուրարտական և նույն ժամանակաշրջանի հուշարձաններում[6]։ Երրորդ աճյունասափորի հետաքրքիր առարկաներից է և կարմրա-

[3] Б. А. Куфтин. Указ. соч., с. 70.

[4] Г. А. Капанцян. Историко-лингвистические работы. Т. II, Ереван, 1975, с. 91.

[5] Б. А. Куфтин. Указ. соч., табл. V, № 9.

[6] Б. Б. Пиотровский. Кармир-блур, I. Ереван, 1950, с. 40, рис. 23; Кармир-блур, II. Ереван, 1952, с. 36, рис. 18; Кармир-блур, III. Ереван, 1955, с. 18; А. А. Мартиросян, Аргиштихинили. Ереван, 1974, с. 150, рис. 94; С. Г. Деведжян. Лорн-Берд. Ереван, 1981, табл. XXV, № 9; Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, աղ. 2, նկ. 5։ Ե. Լալայան. Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931, էջ 180, նկ. 155։



Նկ. 2

վուն ստեատիտ քարից պատրաստված գլանաձև դաշ—կնիքը։ Այն ունի կշռաքարի տեսք (բարձր. 4,5 սմ)։ Վերևում առկա է հարթ, փոքր, կենտրոնում միջանցիկ անցք ունեցող բազմանիստ կախիկը, որի կողային նիստերը զարդարված են երկուական թեք գծերով։ Կողի մակերեսի և հատակի վրա քանդակված են իրար հետևող երկու կենդանիներ և մեկ թռչուն։ Կնիքի կողի վրայի կենդանիների մարմինները հորինված են տարբեր կենդանիների բաղադրամասերի համակցումով։ Բարձր պահած գլուխներով, շլապինդ, ձգված վզերով կենդանիներն ունեն արտակարգ երկար իրաններ, ետ ծալված վերջնամասերով բարակ ոտքեր, մինչև գետին հասնող պոչ։ Նրանց թևերն ու պարանոցը ծածկված են փետուրներն ու բաշը նշանակող կարճ ակոսագծերով։ Կենդանիների գլուխները փոքր են, սրադունչ։ Նրանցից մեկի քիչ կողք թեքված գլխին պատկերված է արու եղջերուի բազմաճյուղ եղջյուր, թևի մոտ՝ կիսալուսին կամ սկավառակ։ Մյուս կենդանին անեղջյուր է, դրա փոխարեն պատկերված է նրա վերև ցցված ականջը։ Այստեղ թերևս քանդակված են խիստ ոճավորված և թևավոր արու և էգ եղջերուներ։ Ուշագրավ է մասնավորապես արու եղջերուի մարմնի տարածական-ծավալային պատկերը, որն իր հորինվածքով տարբերվում է ուրարտական դեկորատիվ և մասնավորապես մանրապատկերային դաշզարդի՝ սյուժեի արտահայտման համար օգտագործված կենդանիների իրանների ձևերից և հիշեցնում է ժայռապատկերներում և բրոնզե գոտիների վրա պատկերված եղջերուներին, որոնց իրանները, շարժուն թե անշարժ վիճակում, ունենում են կենտրոնական մասում վերևից և ներքևից քիչ ներճկված, ձգված օվալի տեսք։ Եղջերուն Վանի թագավորության դեկորատիվ արվեստում ամենից քիչ հանդիպող կենդանին է։ Մինչ այժմ այն հայտնի էր Ալթինթեփեի որմնանկարներից[7] և Կարմիր բլուրում գտնված զարդատուփի վրայի պատկերից[8] (զարդատուփի ուրարտական լինելը խիստ կասկածելի է[9])։ Կնիքի ստորին, շրջանաձև հրապարակի վրա քանդակված թևատարած թռչունը ընթ...քի մեջ է։ Նրա եռանկյունաձև փոքրիկ գլխին պատկերված է աղեղնաձև եղջյուր կամ փետուր։ Թռչունի այս պատկերն իր հորինվածքային մանրամասներով ու դիրքով հիշեցնում է Կարմիր բլուրի միջնաբերդում հայտնաբերված, այժմ Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող կոնաձև գաշ-կնիքի վրայի քանդակը։ Ներկայացված կշռաքարաձև կնիքը Վանի թագավորության մանրաքանդակի հետաքրքիր և մինչ այժմ իր կրկնօրինակը չունեցող մի նմուշ է։

Այս իրերի հավաքածուն ամբողջացնում են սարկոֆագում գտնված երեք թասերը։ Նրանցից մեկը (աղ. 2շ) կարմիր անգորապատ, կիսագնդաձև խորունկ թաս է, որն ունի նուրբ, բարակող, քիչ դուրս ճկված շուրթի պսակ, ներճկված, շրջանաձև, հարթ մակերեսով հատակ, որի վրա խաչերով պատկերված է նժարաձև կշեռք հիշեցնող մի նշան։ Հատակի շրջագծից դուրս, ներճկման եղանակով արված է հիերոգլիֆ մի նշան, որը բաղկացած է լատինական T տառը հիշեցնող հիմնական պատկերից և նրա երկու կողմերում եղած շրջանակներից։ Այս թասն իր ձևով և շուրթի ձևավորմամբ պատկանում է ուրարտական խեցեղենի այն տեսակին, որն այժմ դիտվում է որպես հիմք՝ վաղ հայկական փիալաների աճաջացման համար։ Մյուս երկուսը (աղ. 23,4) միանման խորունկ թասեր են, որոնք ունեն ուրարտական թասերին և տաշտերին բնորոշ շուրթի պսակ և հարթ հատակ. միմյանցից տարբերվում են միայն բաց կավագույն և կարմրադարշնագույն փայլեցված մակերեսների գունային երանգավորմամբ։ Թասերի հարթ հատակների շրջագծից դուրս, կողի ստորին մասում առկա են եռանկյունիներով և սեգմենտաձև պատկերներով ներլեցուն երկուական վարդյակապատկեր դաշվածք, որոնք բավականին հաճախ են հանդիպում ուրարտական կավանոթների վրա։ Նման դաշակիր անոթներ հայտնի են Թուփրախկալեից, Կարմիր բլուրից[10] և ամենից առատ՝ Արգիշթիխինիլից։

Սարկոֆագը Վանի թագավորությունում գոյություն ունեցած թաղման խուցերից մեկն է, որից սկիզբ են առնում հեթանոս և քրիստոնյա հայերի մոտ լայն տարածում գտած և մինչև զարգացած միջնադար գոյատևած միակտոր քարաշեն սարկոֆագները։ Նրա գիտաճանաչողական արժեքն ավելի է բարձրանում, երբ այն դիտարկվում է հնագիտական նյութերի միջոցով հնագույն պատմա-բանահյուսական աղբյուրների տվյալները հաստատելու, նրանց ակունքները որոնելու, բացահայտելու տեսանկյունից։ Այս կապակցությամբ առանձնակի ուշադրության են արժանի սարկոֆագի ուսումնասիրությամբ ի հայտ բերված թաղման ձևի, նրան ուղեկցած արարողության և Մովսես Խորենացու կողմից դրի առնված Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելում Արայի

---

7 Կ. Լ. Հովհաննիսյան. Էրեբունիի որմնանկարները. Երևան, 1975, աղ. 53—54։

8 Б. Б. Пиотровский. Искусство Урарту. Л., 1962 с. 104, рис. 68.

9. Նույն տեղում, էջ 105, նկ. 70։

10 В. С. Сорокин. Раскопки древнего поселения.—В кн.: Б. Б. Пиотровский. Кармир-блур, II, с. 84.

թաղման և նրա դիակի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի մանրամասների նմանությունները։ Ըստ առասպելի, Ասորեստանի դեմ մղված պատերազմում քաջաբար զոհված Արայի դին, Նամիրամի կարգադրությամբ, դրվում է «ապարանքի վերնատունը», ուր Արալեզները պիտի լիզեին նրա վերքերը և Արան պիտի կենդանանար։

Ինչպես տեսանք, սարկոֆագի մեջ դրված աճյունասափորները լցված էին մարդու մասնատված ոսկորներով։ Այդպես կարող էին վարվել միայն մկանաղերծված դիակի հետ։ Այս փաստի առկայությունը վկայում է այն մասին, որ Արդիշթիխինիլիում դիաթաղմանն ու դիակիզմանը զուգահեռ իրականացվել են նաև այսպես կոչված «երկրորդային թաղումներ»։ Հնագիտական տվյալների և հին հեղինակների վկայություններին համաձայն, թաղման այս ծեսի ժամանակ, նընջեցյալի դին դրվում էր բաց երկնքի տակ, առանձնացված վայրում կամ աշտարակի վրա և թողնվում էր այդպես մինչև մսաթափվելը կամ կենդանիների և թռչունների կողմից հոշոտվելը։ Այնուհետև դիակի մնացորդները թաղվում էին համապատասխան արարողությամբ։

Հին Արևելքի ընդարձակ տարածքում վերոհիշյալ ձևով («երկրորդային») թաղումներ հայտնի են կենտրոնական Անատոլիայի Իկոնիայի դաշտի Չաթալհույուկ հուշարձանի նոր քարեդարյան վաղեմություն ունեցող շերտից։ Այստեղ 7—8-րդ հորիզոնների սրբարանների որմնանկարներում ներկայացված է Չաթալհույուկի բնակիչների թաղման ծեսից մի տեսարան, ուր պատկերված է գիշանգղների հոշոտած ու «մաքրած» մի դիակ, իսկ VIB սրբարանի պատին պատկերված է փայտից, ծղոտից ու եղեգից կառուցված այն շինությունը, որտեղ դրված դիակն անջատվում է մսից։ Չաթալհույուկի բնակիչները «մաքրված» ոսկորները փաթաթում էին խսիրի մեջ կամ տեղավորում էին զամբյուղներում և ապա թաղում՝ սրբարանների կամ տների ներսում կառուցված ոչ բարձր թմբերի տակ[11]։

Դիամասնատմամբ (կամ «երկրորդային») թաղման սովորությունը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում Փոքր Ասիայի և Անդրկովկասի տեղաբնիկների մոտ տարածում գտած թաղման ձևերից մեկն է։ Դամբարաններում այն դրսևորվում է կմախքի ոսկորների մի մասի բացակայությամբ կամ տարանջատվածությամբ։ Նման թաղում պարունակող դամբարաններ են պեղվել Սևանի ավազանում, Շիրակի դաշտում, Զանգեզուրում, Տաշիր Զորագետում և այլուր[12], Թաղման այս ձևն իր զուգահեռներն ունի իրանական աշխարհում. համաձայն Է. Հերցֆելդի, Պերսեպոլսում, Սուկավենդում, Ուրմիա լճի շրջակայքում հայտնաբերված են աճյունասափորներ՝ լցված մարդու մսաթափված ոսկորներով։ Սակայն դրանք թվագրվում են ուշ Աքեմենյան կամ հետաքեմենյան ժամանակաշրջանով[13] և Զրադաշտական կրոնի արտահայտություններից են։ Զրադաշտի առաքելական գործունեության մոտավոր էպոխայից ավելի վաղ ժամանակաշրջանի այդպիսի թաղումներ Իրանում հայտնի չեն։ Այս կապակցությամբ հետաքրքիր են Ցիցերոնի և Ստրաբոնի վկայությունները մոգերի թաղման ծեսի մասին Իրանում։ Ըստ այդ հեղինակների, մոգերի դիակները նախապես տրվել են գիշատիչներին՝ հոշոտելու, իսկ Հիրկանիայում, այդ նպատակի համար պահվել են հատուկ շներ[14]։ Մ. թ. ա. VIII—VII դդ. Վանի թագավորությունում և ապա ավելի ուշ՝ VI—IV դդ. Պարսկաստանում դիտվող թաղման այս ծեսը բացատրվում է նախնադարյան կրոնական այն ըմբռնմամբ, համաձայն որի հավատացյալը պարտավոր է խուսափել ամեն տեսակի անմաքրությունից և առաջին հերթին անմաքրության խորհրդանիշ հանդիսացող դիակից։ Նախնադարյան կրոնամիստիկական այս ըմբռնումը Վանի թագավորությունում, Ասորեստանում և ապա նաև Պարսկաստանում մ. թ. ա. VIII—VII դդ. ստացել է ծիսական իմաստ, որի իրականացման համար կառուցել են հատուկ աշտարակներ («վերնատներ»), որտեղ դրել են մահացածի աճյունը, նախքան այն հողին հանձնելը։

Արգիշթիխինիլիի . քննարկված դամբարանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ ծեսը կիրառություն է ունեցել Վանի թագավորությունում և բացառված չէ, որ հետուրարտական Հայաստանում ու Պարսկաստանում հայտնաբերված նման թաղումներն արդյունք լինեն Հայկական լեռնաշխարհում և Իրանում ուրարտական մշակույթի մեծ ազդեցության։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

---

[11] J. Mellart. A neolithic town in Anatolia, p. 65, 77, 116.

[12] Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 145—147; С. Г. Деведжян. Лори-берд, с. 52.

[13] E. Herzfeld. Archaeological history of Iran. London, 1935, p. 39; E. Herzfeld. Iran in the ancient earth. London. 1941, p. 505.

[14] М. А. Дандамаев, В. Г. Луконин. Культура и экономика древнего мира. М., 1980, с. 321.